

դառնայ կ'ըլլայ յարգի՝ բայց միշտ դառն բռնաւորութիւն մը։ Արժան է ուսումնասիրել Սոփոկլի և Պղատոնի գրքերով։ Բայց ջանալ անոնց լեզուի և կորովոյ շնորհքովը ալ աւելի գեղեցիկ և ընտրեալագոյն երենալ, տէր մնալով միշտ իրենց լեզուին։ Ուր յայդ նախկին աղբերաց անբաժան մնալու փափաքը՝ կը դնէ մտքիդ մէջ խօսք մը որ ոչ եւս է կենդանի. և անոր տիրած աւտենիդ՝ դժուարին կ'երենայ անկէ զատուիլը կամ մոռնալը։ Հայք չունին իրենց մատենագրութեան մէջ զնմանիս Սոփոկլի և Պղատոնի։ Բայց ընտիր և հին ոճոյ ընտիր առաջնորդներ, յԱստուածաշունչ գիրս, ի պատմիչս, ի հարս և յեկեղեցական ճարտարխօսութեան։ Որով թէ հայն և թէ յոյն՝ դարէ մը ի վեր, եռանդուն աշխատանքովն զոր ունին՝ նոր ժամանակաց մտածութեանցն համաձայնող՝ նոր ոճ և ձև ստեղծելու, կը ծփան ժողովրդական և ազնուական ոճոյ մէջ։ և որ աւանդութեանց ազդեցութեամբն, նոյն ոճն է որով վարուեցան Պերիկլեայ և Գրիգորի Լուսաւորչին ժամանակակիցքն և ընկերք»։ *

ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈՒՍԻՈՅ

(Տես յ' էջ 344)

Թ

Գիմնագիտունի և մէջ ընդունելութիւն մը. — Երջագայութիւն ի հովիտն Կալիֆարլի. — Հոփտաձորն Գանձոց. — Աձար. — Մարախի ջարդ. — Եռնի քաղաքին ձարտարութիւնքն և վաճառականութիւնն։

Եր բաժնուիք յիշխանէն Միրզա-Ղուլի, մեծապէս գոհք իրեն հետ ծանօթանալնուս համար, և կ'երթանք ի գիմնագիտուն՝ ուր ի պատիւ մեր ընդունելութիւն մի պիտի տրուէր։

* Թուի թէ յօգուածիս հեղինակին գեռ անձանցմ է Նեմեսիոսի դրոց հոյ թարգմանութեան վրայ ընտիր և հմտական քննադատութիւնն որ հրատարակեցաւ ի Հանդես ամսօրեայ։

Տեսուչն Տարասով խիստ լաւ կերպով յաջողած երաժշտական ունկնդրութիւն մի կ'ընծայէ մեզ: Նուագահանդէսը կը տրուի ընդունելութեան մեծ սրահի մը մէջ՝ որոյ որմունքն ծածկուած են ապակափեղկերով որ լի են բնագիտական գործոքը և բնական պատմութեան հաւաքմամբ: Երաժշտականին ուսումը հազիւ վեց ամսէ ի վեր հաստատուած էր հոն, և յիշաւի զարմանաց արժանաւոր էին ձեռք բերուած արդիւնք. որ մեծ պատիւ է ուսուցչին և աշակերտացը արուեստական յարմարութեան՝ որ հայք են և թաթարք:

Յայտագիրը զանազանեալ է. փոփոխակի կը լսուի Ռուսաց ազգային երգը ուրիշ երգոց հետ. այլ և այլ հատուածք՝ համաձայն դաշնակութեամբ ջութակաց, հաստաձայն գործեաց և սրնգաց: Կը վերջացընեն եռաձայն խումբը ընկերակցութեամբ մեղմահնչիւն արուեստականաց. ապա քանի մը երիտասարդ երգասէրք կը նուագեն իրենց մէջ դասական սեպուած լէզկիկզան:

Գաղղիական լեզուն՝ որոյ ուսուցիչը հայրենակից մ'է, շատ գիւրուութեամբ կը խօսին բազումք յաշակերտացն, որք զարմանալի յաջողակութիւն մը ունին լեզուաց, և ինչ որ ուզեն կը սորվին:

Այս հաճոյական նուագերգութենէն ետքը՝ նախաճաշի հրաւէրը մը ըրաւ մեզ տեսուչն Տարասով. որ այս առթով հոն ժողվեր էր ի սեղանակցութիւն, դպրոցին ուսուցիչքն ու քաղքին գլխաւորներն: Քիչ շատ ամէնքն ալ կը խօսէին զգաղղիերէն, և ոմանք՝ մեզ հաւասար վարժութեամբ:

12 մայիս. Շրջագայութեան կ'ելլենք ջրաղացի մը՝ որ Շուշայ մօտ ստացուած մ'է Աթաբեկով բժշկին, հրաւիրեալք ի նմանէ օր մը հոն անցընելու. Ճանապարհին համար հեծնելու ձիեր կ'առաջարկուին. հետերնիս էին իշխանն ու իր որդիքն և ոմանք ի բարեկամաց բժշկին, երկվարօք և այլք կառօք:

Շուշիէն եօթն հազարամէդր հեռի է ջրաղացն, ի հիաքանչ ձորահովիտն կալիֆարլիի՝ ոչ հեռի թանքէնտ գիւղէն, ուր մետաքսի մանարան մը կայ, և քաղաքապահ հետեակ և թնդա նօթաձիգ զօրաց խմբի կայարան մը: Ընտիր նախաճաշէ մը ետքը, ուր բազմաթիւ բաժակք առաջարկուեցան մեր կենդանութեան և ուղւոյն յաջողութեան, ցրուեցան ամէնքն յաջ և յահեակ:

Գետին այն եզերքին վրայ ուր ջրաղացն է, գեղեցիկ կաղամախիք տնկուած են. որոնց թանձր հովանին կը տանի մինչ ի միակամար կամուրջն Աղա քէօփրիւսիւ, որ կ'անցնի ընդ կալիֆարլի, ուր գետն կը նեղնայ ապառաժից բարձր անջրպետով, և հեղեղասաստ ընթացք մը կ'առնու:

Օրը շուտով կ'անցնի Աթաբեկով ամուսնաց սիրալիր ընդու-
նելութեամբ, և հարկ է պատրաստուիլ ի դարձ: Միւս հրաւի-
րեալք արդէն մեկնած են, մինչ ճամբայ կ'ելլենք իշխանին և
որդւոցը հետ, բժշկին որդւոյն ընկերակցութեամբ ուղեկցելով
անոնց կառքին առջևէն: Նոյն ճամբան կը բռնենք՝ որով գիշե-
րախառն և անձրեւածաց հասանք ի Շուշի, փայլատակամբք և
կայծակներով. և հիմայ աչքով կը տեսնեմ թէ որչափ վտան-
գալից էին այն յանկարծական և շուտափոյթ դարձուածք: Լե-
րան եզերաց վրայ բացուած է ճանապարհն, որոյ քով բոլոր եր-
կայնութեամբ գահավէժ մը:

18 մայիս. Նախընթաց օրուան հեծելութեան հետեանք կար-
գէ գուրս յոգնածութիւն մը՝ բռնադատէ զիս հանգչիլ քիչ մը.
որով կ'օգտուիմ կարգի գնել յուշատետրս, մինչ ամուսինս ձիով
շրջագայութեան կ'ելլէ իշխանին հետ, որ ուզեր էր անձամբ
ցոյց տալ Շուշիի անմիջական շրջակայքը: Քաղաքին հարաւային
արեւելեան կողմի հին գերեզմանատան ընդարձակ տեղ մը կայ,
որ նիզակախաղի դաշտ մի դարձած է հիմայ, թաթարաց մե-
ծնապէս սիրելի զուարճութեանը: Իրենց բնակավայր Գոռարտառ
(Գայլ) կոչուած փողոցին մէջ է փանահ մոլլային շէրիմը, որ
կրօնից վարդապետ և քերթող մ'էր: Հիմայ աւերակ է գերեզ-
մանը, և կը նայի Ճափար տէրէսի կամ Գանձուց կոչուած հով-
տին վրայ, ուստի 1886ին հասան Պարսիկք, և Դուրաքհանէի
բարձանց վրայէն գնդակոծեցին զքաղաքն, հրամանատարու-
թեամբ Ապպաս-Միրզայի, Ռիզա-ղուլի Միրզայի մեծ հօրը:

Տեղոյս այս անունը կրելու պատճառը կ'երևնայ որ այլ և այլ
անձաւացը մէջ զոր ու ի, հին խաները կը ծածկէին իրենց
հարստութիւնը: Դեռ ինչուան հիմայ կը տեսնուին այդ քարան-
ձաներու գիմաց պզտի շէնքեր: Հովտին միւս կողմը կառու-
ցուած է Շուշի-քէնդ կոչուած հայկական հին գիւղաքաղաքն, ուր
չայք մեծ արիութեամբ կռուեցան Պարսից յարձակող արշա-
ւանաց դէմ:

Նոյն Գուրտառ թաղին մէջ ուրիշ հին շէրիմ մ'ալ կայ, աճար
մը, թէ՛ Հայոց և թէ՛ աւելի թաթարաց համար նուիրական հա-
մարուած տեղի մը: Հայուհիք հոն կ'երթան զատիկ նախընթաց
չորեքշաբթի օրը աղօթելու, իրենց որ և իցէ փափաքանաց կա-
տարումը խնդրելով: Աճար կոչուածը ուրիշ բան չէ, բայց եթէ
քար մը՝ որոյ վրայ կը գնեն կայծքարիւք և պզտի մոմեր: Այս-
պիսի մեծարեալ վայրք սակաւագիւտ չեն ի Շուշի. յորոց մին՝
ուր առանձին՝ կերպով կը յոճախեն թաթարք յայցելութիւն,
վանդակապատ փոքրիկ շէնք մ'է, և նուիրաբերք՝ ջուր կ'ըն-

ծայեն, լաթի կտորուանք ալ թէ վանդակներուն և թէ մօտը եղող երկու սօսի և շագանակի ծառոց վրայէն կը կախնն:

Այս միջոցիս՝ բովանդակ քաղաքն շարժման մէջ է. պետութիւնը օր ըստ օրէ 1500 անձինք կը ժողվէ, ի պաշտպանութիւն ցորենոյ ընդդէմ մարախի յարձակմանց: Ամէնքը՝ ճոխք և աղքատք, պարտական էին առ այդ. հարուստներն հարկաւ ուրիշ անձի մը փոխանակութեամբ: Ստիկանութեան տան առջև գումարուած խոնած են այդ բռնադատ ժողովելոց բազմութիւն մը: Այս գործին համար սահմանուած յատուկ պաշտօնեայ մը՝ պատշգամին առջև կեցած է, ցուցակ մը ձեռքը, կոշիկով յանուանէ որոց կարգն եկած է երթալու. և անսաստողք՝ հպատակութեան կը բերուին գաւազանաց սաստիկ հարուածներով: Շատ նկարագրական տեսարան մ'է ակամայ զինուորագրելոցս մեկնումը: Ամէն մէկը կաշեայ պարկ մը ունի հետը զգեստուց և ուտեստի. թիեք, աւել, բաճարներնց ամբողջ հանգերձանքը կը կազմեն: Կարելի եղածին չափ և բուն բաւին նշանակութեամբ բեռնաւորուած կառքերու մէջ նստած ճամբայ կ'ելլեն պոռալով, կանչելով, գրեթէ իրենք զիրենք կորսնցուցած, ու սաստկապէս մտրակելով երիվարները որ սլանալով կը թռչին առաջ կ'երթան. և յաճախ ծանր վտանգք կը պատահին այն նեղ ու դարձադարձ ճանապարհաց մէջ...

14 մայիս. Թանձր միգով մը պատած է քաղաքը, անանկ որ տասը քայլ անդին չի տեսնուիր. և կէսօրուան դէմ՝ փոխանակ լուսաւորուելու՝ ալ աւելի կը մթնէ: — Նախաճաշէ ետքը վաճառափողոց կ'երթանք քանի մը մանրմունք գնմամբ մեր ճանապարհորդութեան կարեւորը լրացընելու: Հարկ է գնել տիկ մը գինւոյ համար, և փոքրագոյն մը օղոյ, որոյ համար մասնաւոր կերպով կը յանձնարարէ Յովհաննէս որ չմոռնամ. հարկ է մտոյ մանր խորովածի համար շամփուր ալ ստանալ. այս կողմերու սովորութիւնն է մսեղէնը՝ ոչխարի, եզան, ինչպէս հաւեղէնքն ու ձուկը այդ երկաթներու վրայ եփել. հորթու միս չեն ուտեր, որովհետեւ անգթութիւն կը համարին զանոնք միթեւը...

Մեծ վաճառատեղին լի է ամէն կարեւորք, և հոն տիրող զարմանալի գործունէութիւնը տեսնողը՝ լաւ կ'իմանայ թէ որչափ նշանակութիւն ունի Շուշի. թող որ մեր գտնուած ժամանակ՝ Թաթարաց կրօնական մեծ պահոց ժամանակն ըլլալով, կրպակաց շատերը փակ էին: Թէ քրիստոնեայ և թէ մելիման ժողովրդոց մեծագոյն մասը վաճառականք են. որով և Շուշի ամէն բանէ յառաջ և գերազանցօրէն վաճառական քաղաք մ'է: Աղքատ Թաթարք որ յանձնառու չեն ըլլար բեռնակրութիւնը

նել, կ'երթան 'ի Բագու կամ ուրիշ ճարտարարուեստ տեղուանք, ու կը զբաղին իբրու գործաւորք:

Բաց ի քանի ձեռագործ կերտուածոց և մանողութենէ և մետաքսէից գործարանէ մը, ուրիշ արուեստ և ճարտարութիւն չի կայ ի Շուշի: Ղարաբաղի կոշուած կապերտը նշանաւոր է թանձրութեամբն և բրդոյ ազնուութեամբ, կենդանի գոյներովն ու մեծ նկարներով, Հինքն աւելի գեղեցիկ են և դիմացկուն. պարսկական ոճով ալ կապերտներ կը հիւսեն այնպիսի արուեստով որ մերթ դժուարին կ'ըլլայ իրարմէ զանազանելը:

16 մայիս. Չուղ պատրաստութիւննիս տեսած ատեն ալ, ամուսինս դեռ կը պարապի մարդաշափական ուսումնասիրութեամբք. և վաճառականք չեն դադրիր սենեակնիս լեցընել իւրենց կրպակաց ու նաեւ անոնցմէ դուրս ձգուած նիւթերով: Առտուն հազիւ թէ աշուրնիս կը բանանք, և ահա մեղմով սենեկին դուռը կը բախուի. և ահա անխուսափելին Մէհէմէտ, որ բազմաթիւ բռնաւորուած մշակ' երով կը հանէ ու դիմացնիս կը պարզէ կապերտներ և ուրիշ զանազան նիւթեր, քսիտիք, փորագրուած պղնձով կոնք, ասդնէգործ բանուածք, Շիրազի գզրոցներ: Հարկ էր դաժան երես ցուցընել, իրմէ ազատելու համար:

Կարաւանի մարդոց հետ անվերջանալի բանակցութիւններէ ետքը, որ բռններնիս շատ ծանր կը գտնեն ու անփոխադրելի ճանապարհաց անհարթութիւնը նկատելով, ուր ուրեմն քանի մի նշանաւոր անձանց սիրալիր միջամտութեամբ, մեր պատրաստութիւնք իրենց վախճանը կը գտնեն: Մ'ամուլն ալ իր բարեհաճ օժանդակութիւնը կ'ընծայէ մեզ՝ Մշակ օրագրին ազդեցութիւն ունեցող ձայնովը, որ կը հրաւիրէ ամէն քաղաքաց Հայերը, ուստի պիտի անցնէինք, որ ձեռուրնէն ձեկած ամէն գիւրութիւն և մտադրութիւն ընեն: Այսպիսի փափուկ մոտադրութիւն մը, ուստական պետութեան բարձր պաշտպանութեան հետ խառնուելով, մեծապէս դիւրացոյց մեզ նման ճանապարհորդութեանց անհրաժեշտ դժուարութիւններն, և խորին երախտագիտութեան պարտք մը դրաւ վրանիս:

Սակայն ճրչափ ցաւալի էր որ արեգակն իր զուարթարար կերպարանքը ալ չէր ուզեր ցուցընել մեզ. դեռ քանի' գեղեցիկ լուսագրութիւնք կային ընելիք ի Շուշի. քանի' սկզբնատիպ և անակնկալ տեսարաններ, մա' աւանդ Մէյտանի այնչափ գունազեղ և կայտաւիր հրապարակին վրայ: Վերջին շրջանով մը մեր հրաժեշտի բարեններն կուտանք, և գնումնիս կ'ամբողջացընենք թանձր թաղեզք՝ վրաններու համար:

Շարունակելի